Նազարը: 5·– Զախչախ թագաւորը: 6·– Քէֆ անողին էէֆ չի պակսիլ (փոխադր·): 7·– Բարեկենդանը: 8·– Կիկոսի մահը: 9·– Ոսկու կարասը (փոխադր·):

Թարգմանուած է Թումանեանի *Գէլը* անունով ծանօթ գրուածքն եւս (կենդանիների կեանքից):

ՊՈՒՇԿԻՆԸ ՀԱՅԵՐԷՆ

Ինչպէս յայտնի է, այս տարի տօնուեցաւ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա· Պուշկինի մահուան հարիւրամեակը: Այդ առթիւ, Հայաստանում եղան բազմաթիւ հայերէն հրատարակութիւններ Պուշկինի գործերից, ինչպէս նաեւ կատարուեցին յոբելենական հանդէսներ:

Պէտք է յիշել, որ Պուշկինի բանաստեղծութիւնների հայերէն թարգմանութիւնը սկսուել է շատ վաղուց: Այսպէս, դեռ 1830 թ· Պրոֆ· Էմինը թարգմանել է *«Բախչիսարայի շատրւան»*-ը գրաբար հայերէնով: 1843-ին լոյս տեսաւ Համազասպեանի կազմած ռուսական բանաստեղծութիւնների հայերէն մի ժողովածու, որի մէջ Պուշկինից էլ կար 10 ոտանաւոր: Ապա, զանազան ժամանակներում, եղել են ուրիշ շատ թարգմանութիւններ, եւ, առհասարակ, հայ բանաստեղծներից շատերը զգուել են Պուշկինի ազդեցութեան տակ: Յովհ· Թումանեանը, օրինակ, իր վերաբերմամբ ինքը խոստովանում էր այդ փաստը: «Ես գտնում եմ, —գրում էր նա — որ ռուս պոէտները, գլխաւորապէս Պուշկինն ու Լերմոնտովը, միշտ ինձ հարազատ եւ աւելի մօտիկ են թւացել, քան մեր հայկական պոէտները»: Եւ Թումանեանը ունի մի քանի սքանչելի թարգմանութիւններ Պուշկինից, ինչպէս «Զրահեղէնը», Օլեգի երգը» եւ այլն:

Պուշկինի երկրպագուներից էր եւ Ղ· Աղայեանը, որ տուել է «Ոսկէ ձկնիկ»-ի դեռ չգերազանցուած թարգմանութիւնը:

Այսօր, կարելի է ասել, Պուշկինի ստեղծագործութեան հիմնական մասը արդէն թարգմանուած է հայերէն — *«Եւգենիյ Օնեգին»*, *«Բախչիսարայի շատրւան»*, *«Պոլտաւա»*, *Գնչուներ»*, *«Կովկասեան գերի»*, *«Կալանաւորը»*, *«Պղնձեայ հեծեալ»* քերթուածները, *«Ժըլատ ասպետը»*, *«Մրախճանք ժանտախտի ժամանակ»*, *«Մոցարտ եւ Սալիէրի»* թատերական երկերը, *«Ճանապարհորդութիւն դէպի Էրզրում»*, *«Դուբրովսկի»*, *«Կապիտանի աղջիկը»* եւ ուրիշ արձակ էջերը, ինչպէս նաեւ գրեթէ բոլոր գլխաւոր բանաստեղծութիւնները — «Ցուշարձան», «Գիւղը», «Ազատութիւն», «Անչարը», «Մարգարէ» և այլն:

ԱՀԱՐՈՆԻ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐԸ

Լսում ենք, թէ բանաստեղծ Ահարոնը, որի քնարի հնչիւնները վաղուց լռել են գրական հրապարակում, պատրաստում է իր բանաստեղծութիւնների հրատարակութիւնը առանձին հատորով: Կարող ենք միայն ողջունել այդ ծրագիրը: Ահարոնը մեր տաղանդաւոր, բայց քիչ նանաչուած բանաստեղծներից է: Թերթերի եւ պարբերականների մէջ կորած, կամ դեռ եւս անտիպ մնացած նրա քերթուածների համախմբումը մի հատորի մէջ հնարաւորութիւն պիտի տայ հանրութեան ներկայացնելու Ահարոնի իսկական բանաստեղծական դէմքը: